ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավանի <<Գույների աշխարհ>> մանկապարտեզ ՀՈԱԿ

Հայտարարվում է մրցույթ՝ Մեծավանի <<Գույների աշխարհ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի մեթոդիստի ուսումնական գծով տնօրենի տեղակալի/ 0,25 դրույք/ և երաժշտության դաստիարակի /0,5/ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ կողմից մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1).
- կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
- անձը հաստատող փաստաթուղթ.
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
- ինքնակենսագրություն (Ձև 4).
- մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են Տաշիր համայնքի Մեծավան գյուղի <<Գույների աշխարհ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ում 2026թ հունիսի 29-ից հուլիսի 24-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026թ հուլիսի 30 -ին, ժամը 16:00-ին մեթոդիստի՝ուսումնական գծով տնօրենի տեղակալի, երաժշտության դաստիարակին՝ 14:00-ին, Մեծավանի

<<Գույների աշխարհ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ում, հասցեն՝ գ. Մեծավան, Զ.Անդրանիկի 38

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +37477072959 հեռախոսահամարով: